28 հունիսի 2013 թվականի N 514 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 27-Ի N 1159 -Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 11-ի N 1112-Ն որոշման 5-րդ կետով և հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը՝

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2012 թվականի նոյեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման նկատմամբ հսկողության 2013 թվականի ծրագիրը հաստատելու մասին» N 1159-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) հավելվածից հանել 6-րդ և 8-րդ կետերը.

2) հավելվածը 26-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 26.1-ին կետով.

«

26.1.	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	Արարատյան տարածաշրջանային մաքսատուն	բյուջետային եկամուտների հավաքագրման բնագավառում մաքսատան լիազորությունների իրականացման աշխատանքների կատարման, վճարողների հաշվառման, բյուջե հավաքագրվող գումարների բյուջե փոխանցման ժամկետների պահպանման և ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում գանձված գումարների մասհանումների կատարման ճշտության ստուգում	2010-2012 թթ. և 2013 թ. հաշվետու ժամանակաշրջան

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ